ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-1131[5]-01.08.2025-ՏՏԳՇ-011/0

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 58.1-ին հոդվածով՝

«Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետեւյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների համար նախատեսված կենդանիների կացարանների և հարակից ենթակառուցվածքների (ախտորոշիչ լաբորատորիա, անասնաբուժական կենտրոն, վիրահատարան և այլն) նախագծումը, կառուցումը և կառավարումը, այդ թվում նաև արտապատվիրակման կամ համայնք-մասնավոր համագործակցության ձևաչափով.

2) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման եւ կացարաններ տեղափոխման աշխատանքները.

3~~2~~) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն եւ կատարում է դրանց ամենամյա հաշվառում.

4~~3~~) ~~իրականացնում է Երեւանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը եւ~~ աջակցում է անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների աշխատանքների վարմանը.

5~~4~~) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուծարանների եւ կացարանների գործունեության թույլտվություններ.

6~~5~~) սահմանում է Երեւանի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման ~~եւ~~ կամ թաղման վայրերը.

7~~6~~) ~~երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:~~

~~2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետեւյալ սեփական լիազորությունները.~~

~~1)~~ օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն եւ ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.

8~~2~~) կենդանի տիրապետողից պահանջում է կենդանի պահելուն առչնվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ, փաստաթղթեր:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 4-րդ եւ 5-րդ կետերով.

«4) վարչական շրջանի տարածքում, սահմանված կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն.

5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:»:

Հոդված 3, **Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ղեկավարի՝ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության իրականացման համար համայնքներին կտրվի սուբվենցիա, իսկ երկրորդ և հաջորդող տարիների համար դրանց ֆինանսավորումը կիրականացվի համայնքային բյուջեներից:

~~1.~~**3.**